ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Անդրեասյանը, Վահե Անտոնյանը, Արթուր Ավանեսյանը, Գեվորգ Բաբայանը, Արամ Գասպարյանը, Արտակ Մուրադյանը, Մելիք Նազարյանը, Անի Նահապետյանը, Նվարդ Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Վարդան Գաբրիելյան, Նորիկ Գեվորգյան, Անգելինա Խաչատուրյան, Տիգրան Բաբախանյան, Լեվոն Գրիգորյան, Լուսինե Աստաբացյան, Հասմիկ Ավետիսյան, Զորիկ Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 19-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱՆՉՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՓԱԿՈՒՂԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՀԱՅԿ ԳԵՂԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

11.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 295-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) համաձայն կից հաստատված սխեմայի:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 296-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԳԵԼԻՆԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,
հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման պահանջները՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն 2024 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցման և նորոգման սուբվենցիոն ծրագրի հայտին.

- Մասիս քաղաքի թիվ 4 մանկապարտեզ –հիմնանորոգում
- Մասիս քաղաքի թիվ 7 մանկապարտեզ –հիմնանորոգում

- Ղուկասավան բնակավայրի մանկապարտեզ –հիմնանորոգում և բակի բարեկարգում
- Արբաթ, Գետափնյա, Հայանիստ, Նոր Խարբերդ և Սիփանիկ բնակավայրերի մանկապարտեզներ- կառուցում
- Դարակերտ բնակավայրի մանկապարտեզ –կցակառույցի կառուցում
- Նորամարգ բնակավայրի մանկապարտեզ –վերակառուցում:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 297-Ա/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 183-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 298-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 19-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի N 225-Ա որոշման 19-րդ հավելվածի 2-րդ կետի 4-րդ տողի ,,Հաստիքային միավոր,, սյունակում գրված ,,0.5,, թիվը փոխարինել ,,1,, թվով և ,,Ընդամենը,, տողի ,,Հաստիքային միավոր,, սյունակում գրված ,,18.3,, թիվը փոխարինել ,,18.8,, թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 299-Ա/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱՆՉՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՓԱԿՈՒՂԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով կադաստրի կոմիտեի հասցե տրամադրելու մասին որոշման քաղվածքը՝ /ծածկագիր 03081JUDYEXS/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Մասիս համայնքի Ռանչպար բնակավայրի 2-րդ փողոց 1-ին նրբանցքից դեպի ձախ թեքվող առաջին փողոցը անվանակոչել՝ Ռանչպար, 2-րդ փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 300-Ա/

Լսեցին
ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Սամվել Վարդազարյանի դիմումը /18.10.2023թ. հայտ՝ 0001-2499/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Դաշտավան բնակավայրում գտնվող Սամվել Խաչատուրի Վարդազարյանին սեփականության իրավունքով պատկանող 03-033-0111-0027 կադաստրային ծածկագիրը կրող, 0.09254 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ գյուղմթերքի վերամշակման տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 301-Ա/

Լսեցին

ՀԱՅԿ ԳԵՂԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Հայկ Հակոբյանի դիմումը /31.10.2023թ. հայտ՝ 0001-2789 /՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Արբաթ բնակավայրում գտնվող Հայկ Գեղամի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 03-017-0135-0020 կադաստրային ծածկագիրը կրող, 0.39 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 302-Ա/

Լսեցին

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ նշված տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերը կանաչապատման և բարեկարգման նպատակով 50 տարի ժամկետով տրամադրել վարձակալության մրցութային կարգով.

- ՀՀ Արարատի մարզ Մասիս գ.Արգավանդ Օդանավակայանի փողոց 2/2 /0,00408 հա, ծածկագիր՝ 03-018-0235-0021,
- ՀՀ Արարատի մարզ Մասիս գ.Արգավանդ Օդանավակայանի փողոց 2/3 /0,00613 հա, ծածկագիր՝ 03-018-0235-0023/ հասցեներում գտնվող հողամասերը:

Մեկնարկային գին սահմանել 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 303-Ա/

Լսեցին

ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով քաղաքացի Սամվել Սահակի Սահակյանի դիմումը /մտից՝ 08.11.2023թ թիվ 14680/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Համաձայնություն տալ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Մասիս քաղաք Նոր թաղամաս 4-րդ փողոց 23 հասցեում գտնվող քաղաքացի Սամվել Սահակի Սահակյանի սեփականություն հանդիսացող 03-003-0137-0654 կադաստրային ծածկագրով, 0.041հա հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Մասիս քաղաքի Նոր թաղամաս 4-րդ փողոց 11/1 հասցեում գտնվող 03-003-0137-0726 ծածկագիրը կրող 0,041 հա /սեփականության վկայական 07092023-03-0066/համարժեք հողամասով փոխանակությանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 304-Ա/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով , հիմք ընդունելով Անահիտ Նազարյանի լիազորած անձ Նուբար Հակոբյանի դիմումը /մտից՝ 22.06.2023թ. թիվ 8106/, Մասիս քաղաքապետի և քաղաքացի Գուրգեն Նազարյանի միջև 09.11.2005, թվականին կնքված վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մասիս քաղաքի 03-003-0298-0760 ծածկագիրը կրող 0,0173 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Անահիտ Եղիազարի Նազարյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի Մասիս քաղաքում գտնվող 03-003-0298-0760 ծածկագրով 0,0173 հա բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողատեսքի հողամասը / վկայական N 22092023-03-0067/, թույլատրել ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում, գնման նախապատվության իրավունքով, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 150 %-ով /1 քմ-ը 4441,8 դրամ/ ընդհանուր 768432 /յոթ հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ արժեքով օտարել Անահիտ Եղիազարի Նազարյանին:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 305-Ա/

Լսեցին
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ և հիմք ընդունելով հողամասի վարձակալ <<ՄԵԾՆ ՀՈՎՆԱՆ>> ՍՊԸ տնօրեն Ա.

Հարությունյանի դիմումը /մտից՝ 02.10.2023թ. N 12570/ և հաշվի առնելով ՀՀ Արարատի մարզպետի 22/11/2023-ի N 01//06910-2023 գրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ <<ՄԵԾՆ ՀՈՎՆԱՆ>> ՍՊԸ կողմից վարձակալված, Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 4,0 հա մակերեսով հատուկ նշանակության հողամասը ենթավարձակալության տրամադրելու վարձակալության տրված ժամկետով և պայմաններով <<Էլեկտրոքար>> ՍՊԸ-ին:

Կողմ-12 Դեմ-2 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 306-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱՅԱՆԵ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ԷԼՄԻՐԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՋՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝

Վարդան Գաբրիելյանը _____

2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՑՈՒՑԱԿ

2023 թվականի նոյեմբերի 24-ի ավագանու հերթական նիստի

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ստորագրություն
1	Համբարձումյան	Դավիթ	Միհրի	
2	Հակոբյան	Նորայր	Արեգի	
3	Եղիազարյան	Արսեն	Գագիկի	
4	Արամայիսյան	Կարեն	Գագիկի	
5	Օհանջանյան	Ելիզավետա	Գրիգորի	
6	Օսեյան	Զոհրաբ	Հայկի	
7	Կարապետյան	Կարեն	Բաբկենի	
8	Նահապետյան	Անի	Համլետի	
9	Շաբոյան	Երեմ	Մանվելի	
10	Ավանեսյան	Արթուր	Արկադիի	
11	Աֆրիկյան	Նունե	Ջանիբեկի	
12	Վարդանյան	Էդվարդ	Հրաչյայի	
13	Սարգսյան	Վարդուհի	Ռուբիկի	
14	Վանյան	Նաիրա	Մարտիկի	
15	Նազարյան	Մելիք	Դմիտրիի	
16	Սարգսյան	Նվարդ	Անդրանիկի	
17	Թադևոսյան	Արման	Աշոտի	
18	Գասպարյան	Արամ	Վլադիմիրի	
19	Ասատրյան	Անուշ	Ռոլիկի	
20	Բաբայան	Գևորգ	Միշայի	
21	Մուրադյան	Արտակ	Վեմիրի	
22	Ոսկանյան	Էլմիրա	Համլետի	
23	Անտոնյան	Վահե	Գագիկի	
24	Մեսրոպյան	Կարապետ	Բագրատի	
25	Թովմասյան	Կարինե	Գևորգի	
26	Անդրեասյան	Արտակ	Մեհրաբի	
27	Ահարոնյան	Գայանե	Գեղամի	